

# ՄԱՐԶԱԿԱՆ

ՓԵՔԻՆ-2008

23 ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ՈՒՂԵԳԻՐ  
ՀԱՅ ԸՍԲԻՇՆԵՐԸ ՓԱՅԼԵՑԻՆ ՍԵՐԲԻԱՅՈՒՄ

Սերբիայի Նոլի Սադ քաղաքում աւարտուեց յունա-հունիզական ոճի ըմբշամարտի վերջին վարկանիշային մրցաշարը Պեկինի օլիմպիական խաղերից առաջ: Հայաստանը ներկայացուցիչները յաջող հանդէս եկան գրեթէ բոլոր քաշային կարգերում:



60կգ քաշային կարգում եւրոպայի կրկնակի ախոջեան Կարէն Մնացականեանը այս քաշային կարգում յաղթելով 2 մրցակիցների դուրս եկաւ քառորդ եզրափակիչ, որտեղ զիջեց ֆրանսիացի Սեբաստիան Հիդալգոյին: Վերջինս, բարեբախտաբար, դուրս եկաւ եզրափակիչ եւ դեռ աւելին՝ յաղթեց, ինչը հնարաւորութիւն տուեց Մնացականեանին շարունակել պայքարը 3-րդ տեղի համար: Այստեղ Մնացականեանը յաղթեց իր իրանցի մրցակցին եւ տիրացաւ օլիմպիական ուղեգրի:

74կգ քաշային կարգում Արսէն Զուլֆալակեանը քառորդ եզրափակիչում զիջեց ուկրաինացի Վլադիմիր Նացկեւիչին, սակայն նրա մրցակիցը եւս դուրս եկաւ եզրափակիչ եւ Արսէնը պայքարը շարունակեց 3-րդ տեղի համար: Զուլֆալակեանը վճռորոշ մրցամարտում յաղթեց Չեռնոգորիայի ներկայացուցիչ Գորան Բուլատովիչին եւ եւս մէկ ուղեգիր նուաճեց:



84կգ քաշային կարգում հանդէս եկաւ Դենիս Ֆորովը, որը եւս կարողացաւ գրաւել 3-րդ հորիզոնականը եւ դառնալ Պեկինի օլիմպիական խաղերի մասնակից:

Հայաստանի ներկայացուցիչները կատարեցին իրեն առջեւ դրուած խնդիրը եւ օլիմպիական վարկանիշ ձեռք բերեցին: Մինչ այս ուղեգիր էին նուաճել նաեւ մեր 55 կգ, 60կգ եւ 120կգ քաշային ըմբիշները, ուստի նրանք այս մրցաշարին մասնակցելու իրաւունք չունէին:

Այսպիսով՝ Հայաստանի յունա-հունիզական ոճի հաւաքականը 2008թ. օլիմպիական խաղերում մասնակիցներ կ'ունենայ 6 քաշային կարգերում, ինչը մեծ անակնկալ է եւ փայլուն արդիւնք:

Հայ մարզիկները օլիմպիական 23 վարկանիշ են ձեռք բերել, սպասուած են նաեւ 1-2 «սպիտակ քարտեր» միջազգային օլիմպիական կոմիտէից:

ՖՈՒԹՊՈՒԼԻ ԵՐՈՊԱՅԻ ՄԻՆՉԵՒ 19 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԵԶՐԱՓՈՎԵՑ ԱՂԻՄԱԿԸ

Մինչեւ 19 տարեկանների Հայաստանի պատանեկան հաւաքականն աւարտեց իր անփառունակ ելույթները եւրոպայի առաջնութեան ընտրական մրցաշարի էլիտար փուլում: Աւարտական՝ 3-րդ խաղում էլ մեր պատանիները 2-4 հաշուով պարտութիւն կրեցին մրցաշարի յաղթող սպանացիներին, որոնք մինչ այդ հանդիպումն արդէն նուաճել էին եզրափակիչի ուղեգիրը: Ընդ որում հայ պատանիները խաղը շահուած էին 2-0 հաշուով, սակայն վերջին հինգ շաբաթներին 2 գոլ բաց թողեցին ու պարտուեցին: Միւս խաղում ուկրաինացիները 3-0 հաշուով յաղթեցին թուրքերին եւ խմբում 6 միաւորով զբաղեցրին 2-րդ տեղը: 3-րդ տեղում թուրքերն են, իսկ հայ ֆուտբոլիստներն այդպէս էլ միաւոր չվաստակելով, եզրափակեցին աղիւսակը:



Հայաստանի առաջին մրցակիցն էր Թուրքիայի հաւաքականը: Հայաստանը պարտուեց 2:1 հաշուով: Հայաստանի պատանեկան հաւաքականը իր երկրորդ պարտութիւնը կրեց Ուկրաինայի թէ՛մ 0-1 հաշուով:

## ՄԱՆՉԵՍԹԸՐ ԵՈՒՆԱՅԹԸՑ ՇԱՐԵՑԱՒ ՉԵՄՓԻՆՁ ԼԻԿԸ

Մանչեսթըր Եունայթըտ շահեցաւ եւրոպական ակումբներու ֆուլթպոլի Չեմփիընզ Լիկի բաժակը: Աւարտական մրցումին, «Կարմիր Սատանաներ»ը, չեռ երկարաձգումի փենալթիի հարուածներով պարտութեան մատնեցին Չելսին: Մրցումը աւարտեցաւ 1-1 արդիւնքով (կիսախաղ՝ 1-1) եւ չեռ երկարաձգութեան արդիւնքը անփոփոխ մնաց: Աւարտական մրցումը կայացաւ Մոսկուայի մէջ աւելի քան 75 հազար մարզասէրներու ներկայութեան:



# Palm Springs

PALM SPRINGS ԱՐՉԱԿՈՒՐԴԻ ԳԼԱՅՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից Լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասեմեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, քեմիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքմիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

- Վարձման գներն են՝
- Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ \$ 400
- Long Weekend-ների համար՝ \$ 500
- Մէկ շաբաթուայ համար՝ \$ 675
- Մէկ ամսուայ համար՝ \$ 1450



Մանրամասների համար հեռաձայնել  
**(818) 246-0125**

# ՔԱՋ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան  
ժամը 10:00-ից 12:30  
Կլէնտոյլի 280-րդ կայանից

# ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

ՇԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑԸ  
**CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ**  
(ՎԼԵՆՏԵՅԼ, ՊԸՐՊԵՆՔ, ԼԱ ՔՐԵՍԵՆԹԱ)  
**GLOABCAST SATELLITE**  
ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

# ԲԱՑՈՒԱԾ Է

Հիպնոսաբուժութեան կեդրոն  
դեկավարութեամբ՝  
Փորձառու բժիշկ Արթին Սաղրեանի  
Փասատիւնայի մէջ

Ամէն օր՝ առաւօտեան ժամը 10:00էն մինչեւ կ.ե. ժամը 3:00  
Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E  
Pasadena CA 91104  
Հեռախօս (818) 434-8118 միայն ժամադրութեամբ

# Հայ Թելեժամը Կը Վերադառնայ 18ը Ալիքի Վրայ

Ոչ թէ մէկ, ոչ թէ 2, ոչ թէ 3 ժամ, այլ Օրուան 24 ժամերը  
**Շաբաթը 7 օր անվնար**  
Հարկ չկայ բաժանորդագրուելու - 40 Յաւելեալ ալիքներ  
Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել  
Հայկական Թելեժամ (818) 982-2400